



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ 2-32-40
Fax 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2016թ.

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ
Պատճենը՝ Armtimes.com լրատվական կայքի լրագրող
Սեդա Ղուկասյանին
/ Ghukasyansed@gmail.com /

Ձեր 30.08.2016թ. թիվ ԱԿ/02.2/9501-16 գրությանը՝

Հարգելի պարոն Կարապետյան

ՀՀ Լոռու մարզպետարանում քննարկվել են Armtimes.com լրատվական կայքի լրագրող Սեդա Ղուկասյանի 29.08.016թ ՀՀ առողջապահության նախարարին ուղղված թիվ 23497 գրությունում բարձրացված հարցերը, որոնց կապակցությամբ տեղեկացնում եմ հետևյալը.

- ՀՀ Լոռու մարզի Մարզահովիտ, Ֆիզլետովո, Լերմոնտովո և Անտառաշեն համայնքների ազգաբնակչությանը սպասարկում է «Մարզահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որտեղ աշխատում են երկու ընտանեկան բժիշկներ:
- «Մարզահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի սպասարկման տարածքի ազգաբնակչության միայն տնային կանչերը իրականացվում են

«Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի ընտանեկան բժիշկների կողմից՝ մինչև ժամը 18⁰⁰-ը, իսկ շտապօգնության ծառայությունը իրականացվում է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ օգնության ծառայության միջոցով՝ բացառապես շտապ օգնության մեքենաներով:

- Լոռու մարզի գյուղերին առանձին-առանձին շտապօգնության ծառայություն հատկացնել հնարավոր չէ, քանի որ շտապօգնության ծառայությունը ենթադրում է ոչ միայն ավտոմեքենա, այլ նաև շուրջօրյա, հերթափոխով աշխատող բժշկական և ոչ բժշկական անձնակազմ: Նման ֆինանսական հնարավորություն գյուղական բժշկական ամբուլատորիան չունի:
- 2016թ. օգոստոսի 1-ին ժամը 19:41-ին «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ օգնության ծառայություն /0322/ 2-35-31 հեռախոսահամարից ստացվել է կանչ՝ Մարգահովիտ համայնքի մոտ, ավտոմայրուղում տեղի ունեցած վթարի կապակցությամբ: Ըստ Locator ծառայության՝ մեքենան տեղ է հասել 15 րոպե հետո՝ շարժվելով 79կմ/ժ միջին արագությամբ, շարժման սկիզբը՝ ժամը 19:41:48: Շտապօգնության բրիգադը տեսել է երկու դիակ, մյուս տուժածներն արդեն տեղափոխված են եղել այլ մեքենաներով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ն.ՍԱՐԳՍՅԱՆ